ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«31» 01 2025 թ.
№ ՊԵՆՊ-ԳԳԼ-84

«ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 05028672
ՀՀ, ք. Աշտարակ, Երևանյան /Շ/ 85/3
Հեռ. 055 336666
էլ. հասցեն՝ grigorbaghdasaryan87@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 05.04.2024թ. կնքված ՈԳՀԱՊՁԲ-24-10/9-10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը պետք է մատակարարեր՝ 400 հատ «Ներկելու հոլակ, լոգնոցով», 80 հատ «Մետաղ կտրելու մկրատ (փշալար, թիթեղ)», 10 հատ «Բենզասղոց», 100 կգ «Պարանիտ պոն (քլինգրիտ) 3 մմ», 100 կգ «Պարանիտ ՊՈՆ (քլինգրիտ) 5 մմ/», 50 կգ «Խծուծ ԽԲՊ (набивка) Φ 6 մմ», 50 կգ «Խծուծ ԽԲՊ (набивка) Φ10 մմ», 30 կգ «Ասբոշնուր 28 մմ», 1,000 հատ «Ջեռուցման մարտկոցներ Ա-600», որոնք «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2025թ. հունվարի 31-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **451,814** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև **11.12.2024թ.** և **38,617** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ **917,100** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ **1,375,650** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2025թ. փետրվարի 7-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **917,100** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **1,375,650** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2025թ. փետրվարի 7-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ